Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թ.
նոյեմբերի 7-ի նիստի N 46
արձանագրային որոշման

Բանակցված տարբերակ
2013թ._____-___

N_____

Ռոքիո Մալպիկա
17 սեպտեմբերի, 2013թ.

ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ _____-__

Ֆինանսավորման համաձայնագիր

(Զարգացման քաղաքականության առաջին ֆինանսավորում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ

միջև

Թվագրված՝ , 201_

MAR46-22.1

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Համաձայնագիր՝ թվագրված 2013 թվականի _____-ով, կնքված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (‹‹Ստացող››) և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (‹‹Ընկերակցություն››) միջև, որի նպատակն է ֆինանսավորում տրամադրել Ծրագրին առնչվող գործողությունների իրականացման համար (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի հավելվածում): Ընկերակցությունը որոշել է սույն ֆինանսավորումը տրամադրել ի թիվս այլնի՝ (ա) Ծրագրի շրջանակներում Ստացողի կողմից արդեն իսկ իրականացված գործողությունների, որոնք նկարագրված են սույն Համաձայնագրի 1-ին Լրացման I բաժնում, և (բ) Ստացողի կողմից մակրոտնտեսական քաղաքականության համապատասխան դաշտի պահպանման հիման վրա: Ստացողն ու Ընկերակցությունը սույնով համաձայնում են հետևյալի մասին:

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի հավելվածում) կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված բառեզրերն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի հավելվածում իրենց վերագրված նշանակությունները:

ՀՈԴՎԱԾ II. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

2.01. Ընկերակցությունը համաձայնում է սույն Համաձայնագրում սահմանված պայմաններով Ստացողին տրամադրել քառասունմեկ միլիոն ԱՄՆ դոլար ($41,000,000) վարկ (հետայսու՝ ‹‹Վարկ›› և ‹‹Ֆինանսավորում››):

2.02. Ստացողը կարող է առհանել Վարկի միջոցները ի ապահովումն Ծրագրի իրագործման՝ Համաձայնագրի 1-ին Լրացման II բաժնի համաձայն:

2.03. Ստացողի կողմից Վարկի չառհանված մնացորդի համար պարտավճարի առավելագույն գումարը կազմում է տարեկան մեկ տոկոսի մեկ երկրորդը (1%-ի 1/2):

2.04. Առհանված վարկի մնացորդի համար Ստացողի կողմից վճարվելիք սպասարկման վճարը պետք է հավասար լինի հետևյալ ցուցանիշներից ամենամեծին՝ (ա) տարեկան մեկ տոկոսի երեք քառորդ (1%-ի 3/4) գումարած բազայի ճշգրտումը, և (բ) տարեկան մեկ տոկոսի երեք քառորդ (1%-ի 3/4):

2.05. Առհանված վարկային մնացորդի համար Ստացողի կողմից վճարվելիք տոկոսադրույքը պետք է հավասար լինի հետևյալ ցուցանիշներից ամենամեծին՝ տարեկան մեկ ամբողջ քսանհինգ տոկոս (1.25%) գումարած բազային ճշգրտումը, և (բ) տարեկան զրո տոկոս (0%):

2.06. Վճարման ժամկետներն են յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ը և նոյեմբերի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը պետք է հետ վճարվի Համաձայնագրի 2-րդ Լրացմամբ սահմանված՝ մարման ժամանակացույցի համաձայն:

2.08. Վճարման արժույթը դոլարն է:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐ

3.01. Ստացողը հայտարարում է Ծրագրի և դրա իրականացման իր հանձնառության մասին: Այդ նպատակով՝

(ա) Ստացողը և Ընկերակցությունը ժամանակ առ ժամանակ, կողմերից մեկի պահանջով, տեսակետներ են փոխանակում Ստացողի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի և Ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ.

(բ) Նախքան տեսակետներ փոխանակելը՝ Ստացողը ուսումնասիրման, դիտողությունների ու առաջարկների նպատակով Ընկերակցությանն է ներկայացնում Ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն՝ ներկայացնելով ողջամտության շրջանակներում Ընկերակցության կողմից պահանջվող մանրամասները. և

(գ) Սույն բաժնի (ա) և (բ) կետերի դրույթներին զուգահեռ՝ Ստացողն առանց հապաղման Ընկերակցությանը պետք է տեղյակ պահի ցանկացած այնպիսի իրավիճակի մասին, որը կարող է Ծրագրի նպատակների վրա նյութական անբարենպաստ ազդեցության հետևանք ունենալ, կամ Ծրագրի շրջանակներում ձեռնարկված գործողությունների, այդ թվում նաև Համաձայնագրի 1-ին Լրացման I հավելվածի գործողությունների մասին:

ՀՈԴՎԱԾ IV. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ դեպքերն են՝

ա) Այնպիսի իրավիճակի առաջացումը, որն անհնար է դարձնում Ծրագրի կամ դրա էական մասի իրականացումը.
բ) Ստացողի կողմից Վարկային համաձայնագրով նախատեսված որևէ պարտավորության չկատարումը:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմաններն են՝

(ա) Ընկերակցությանը բավարարում է Ստացողի՝ Ծրագրի իրականացման մասով արձանագրած առաջընթացը և Ստացողի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի համապատասխանությունը:

(բ) Վարկային համաձայնագիրը կատարվել և ներկայացվել է, և իրականացվել են Վարկային համաձայնագրի գործողությունն ապահովող բոլոր նախապայմանները կամ Ստացողի՝ դրա շրջանակներում (Ֆինանսական համաձայնագրի գործողությունից դուրս) առհանումներ կատարելու իրավունքը:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ամսաթվին հաջորդող իննսուներորդ (90) օրն է:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ. ՀԱՍՑԵՆԵՐ

6.01. Ստացողի ներկայացուցիչը վերջինիս ֆինանսների նախարարն է:
6.02. Ստացողի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 0010
Մելիք Ադամյան 1

Ֆաքս՝

+374-10-524282

6.03. Ընկերակցության հասցեն է՝

International Development Association
1818 H Street, N.W.
Washington, D.C. 20433
United States of America

Հեռատիպ՝	Տելեքս՝	Ֆաքս՝
INDEVAS Washington, D.C.	248423(MCI)	1-202-477-6391

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է վերն առաջինը նշված ամսաթվի և տարվա դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ կողմից

/ստորագրություն/ _____

Լիազոր ներկայացուցիչ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ կողմից

/ստորագրություն/ _____

Լիազոր ներկայացուցիչ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1

Ծրագրի գործողություններ. Ֆինանսավորման միջոցների առկայություն

Բաժին I. <u>Ծրագրի շրջանակներում ձեռնարկված միջոցառումներ</u>. Ծրագրի շրջանակներում Ստացողը ձեռնարկել է հետևյալ միջոցառումները՝

Հենասյուն I. Մրցունակության ամրապնդում

Տեսչական բարեփոխումներ

1. Ստացողը միավորել է երկու տեսչական գերատեսչություններ (Աշխատանքի տեսչությունը և Հակահամաճարակային տեսչությունը)՝ տնտեսվարող սուբյեկտների համար տեսչական ստուգումների բեռը կրճատելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 857 որոշման համաձայն:

Վարկային տեղեկատվության տրամադրման, գրավի ապահովման և Սնանկության մասին օրենքի բարեփոխում

2. Ստացողը, Կենտրոնական բանկի միջոցով, մի շարք միջոցառումներ է իրականացրել վարկային ռեգիստրի և հաշվետվությունների համակարգերի աշխատանքը կատարելագործելու նպատակով, ներառյալ՝ (i) սպառողական վարկերին առնչվող կոնկրետ պահանջների սահմանում, որոնց մասին ծանուցվել են ՀՀ բոլոր բանկերն ու վարկային կազմակերպությունները, (ii) փոփոխություններ են կատարվել Ֆինանսական համակարգի կայունության և սպառողների պաշտպանությամբ զբաղվող բաժնի կանոնադրության մեջ՝ հստակեցնելով նշված բաժնի դերը՝ վարկային տեղեկատվության տրամադրման հարցերի առնչությամբ, (iii) սահմանափակվել են ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրի գործառույթները, ինչն ուժի մեջ է մտնելու 2014 թվականի հունվարի 1-ից, (iv) հստակեցվել և համախմբվել է վարկային տեղեկատվության տրամադրման համակարգերի վերահսկողական գործառույթը՝ (ա) լրամշակումներ կատարելով Վերահսկողության, Իրավաբանական և Ֆինանսական կայունության ապահովման վարչությունների կանոնադրություններում, (բ) սահմանելով Սպառողների իրավունքների պաշտպանության բաժնի դերը, և (գ) բոլոր ֆինանսական հաստատությունների՝ միասնական վերահսկողության և կիրարկման պատասխանատվությունը տալով ‹‹Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովին››, ինչպես վկայում են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի՝ 2013թվականի հուլիսի 16-ի թիվ 1/599A և 2013թվականի օգոստոսի 8-ի թիվ 1/710Լ որոշումները, և ՀՀ ԿԲ-ի 2013 թվականի հուլիսի 4-ի Շրջաբերականը:

Քաղաքացիական ծառայության բարեփոխում

3. Ստացողը, 2013թվականի հուլիսի 25-ի ՀՀ կառավարության նիստում, հավանություն է տվել ‹‹ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին›› ՀՀ օրենքին, որն ուղղված է մասնագիտական աշխատակազմի հավաքագրման, պաշտոնեական առաջխաղացման ճկունությունն ընդլայնմանը և պարբերական բնույթ կրող պարտադիր ատեստավորման պահանջը վերացնելուն, և 2013թվականի օգոստոսի 2-ին ուղարկել հաստատման ՀՀ ազգային ժողով:

Օդային կապուղիներ

4. Ստացողը՝ (ա) ՀՀ կառավարության՝ 2013թվականի հունիսի 6-թիվ 22 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել ավիացիոն ոլորտի նոր քաղաքականությանը, (բ) Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (ՔԱԳՎ) ինտերնետային կայքում հրապարակել է օդային ծառայությունների մասին համաձայնագրերն ու համապատասխան փոփոխությունները՝ ավիացիայի ոլորտի թափանցիկությունը բարձրացնելու նպատակով, և (գ) ավարտել և հրապարակել է օդային տրանսպորտի ոլորտի ազատականացման քաղաքականության տարբերակների մասին ուսումնասիրությունը:

Ֆինանսական ոլորտի զարգացում

5. Ստացողը, 2013թվականի օգոստոսի 22-ի ՀՀ կառավարության նիստում, հավանություն է տվել ‹‹Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծին և 2013 թվականի օգոստոսի 28-ին ներկայացրել է ՀՀ ազգային ժողով հաստատման: ՀՀ կենտրոնական բանկը, 2013 թվականի սեպտեմբերի 9-ին կայացած ղեկավար խորհրդի նիստում, պարզաբանումներ է տվել նշված օրենքի 44-րդ հոդվածի որոշ դրույթների առնչությամբ՝ կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարումը բարելավելու նպատակով:

Հենասյուն II. Հարկաբյուջետային, սոցիալական և բնապահպանական կայունության բարելավում

Հարկային եկամուտների մոբիլիզացում

6. Ստացողը, կառավարության 2013թ. հուլիսի 25-ի թիվ 29 արձանագրային որոշմամբ ընդունել է (i) ուղեցույց՝ «Հարկային արտոնությունների և ակցիների դրույքաչափերի ուսումնասիրման ռազմավարական սկզբունքները», որը ներառում է հարկային ազատումների ուսումնասիրություն, նպատակ ունենալով հայտնաբերել եկամուտների հավաքագրման հնարավորությունները, և (ii) հաստատել է հարկային և մաքսային օրենսդրություններում փոփոխություններ կատարելու միջնաժամկետ ռազմավարությունը:

Սոցիալական օժանդակություն

7. Ստացողը, ՀՀ կառավարության՝2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1859 որոշմամբ, բարելավել է ընտանեկան նպաստների ծրագրի հասցեականությունն ու ծածկույթը՝ կատարելագործելով հասցեականության որոշման բանաձևը:

Հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կայունության օպտիմալացում

8. Ստացողը, ՀՀ բնապահպանության նախարարության միջոցով, մշակել և հավանության է արժանացրել միջազգային լավագույն փորձին համահունչ՝ ‹‹Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին›› նոր օրենքի նախագիծ և 2013թվականի օգոստոսի 2-ին ներկայացրել է ՀՀ ազգային ժողով՝հաստատման:

Բաժին II. **<u>Ֆինանսական միջոցների առկայություն</u>**

Ա. **Ընդհանուր.** Ստացողը կարող է առհանել Վարկի միջոցները՝ սույն բաժնի դրույթների և Ընկերակցության կողմից Ստացողին ուղարկված ծանուցմամբ նշված լրացուցիչ ցուցումների համաձայն:

Բ. **Վարկի գումարների հատկացումը.** Վարկը տրամադրվում է առհանման եզակի տրանշով, որից Ստացողը կարող է ֆինանսավորման առհանումներ կատարել: Այդ նպատակով Վարկի գումարների հատկացումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Հատկացումներ	**Վարկից հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով)**
(1) Առհանման եզակի տրանշ	41,000,000 ԱՄՆ դոլար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	41,000,000 ԱՄՆ դոլար

Գ. Տրանշի առհանման պայմանները.

1. Առհանում չպետք է կատարվի Առհանման եզակի տրանշից, եթե Ընկերակցությանը չի բավարարում (ա) Ստացողի կողմից իրականացվող Ծրագիրը, և (բ) Ստացողի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի համապատասխանությունը:

Դ. Ֆինանսավորման միջոցների հաշվեգրում. Եթե Ընկերակցությունն այլ բան չի նախատեսել, ապա՝

1. Վարկի հաշվից բոլոր առհանումները պետք է հաշվեգրվեն Ստացողի նախանշած և Ընկերակցության համար ընդունելի հաշվին, և

2. Ստացողը պետք է երաշխավորի, որ այդ հաշվին Վարկի գումարից կատարվող յուրաքանչյուր հաշվեգրման ժամանակ համարժեք գումար հաշվարկվի Ստացողի բյուջեի կառավարման համակարգում՝ Ընկերակցության համար ընդունելի կարգով:

Ե. Անթույլատրելի ծախսեր. Ստացողը հանձն է առնում, որ Վարկի միջոցները չեն օգտագործվի անընդունելի ծախսեր ֆինանսավորելու համար: Եթե Ընկերակցությունը որևէ պահի որոշի, որ Վարկային միջոցներից գումարներ են օգտագործվել Անընդունելի ծախսերը ֆինանսավորելու համար, ապա Ստացողն Ընկերակցության ծանուցումը ստանալուց հետո առանց հապաղման պետք է Ընկերակցությանը փոխհատուցի ծախսված գումարին համարժեք չափով: Նման պահանջի համաձայն Ընկերակցությանը փոխհատուցված գումարները չեղյալ են համարվում:

Զ. Փակման ամսաթիվ. Փակման ամսաթիվը 2014 թվականի մարտի 31-ն է:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2

Մարման ժամանակացույց

Վճարման ամսաթիվ	**Վճարման ենթակա մայր գումարի մասնավճար (տոկոսային արտահայտությամբ)***
Յուրաքանչյուր մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին	
Սկսած 2018 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2028 թվականի մայիսի 15-ը ներառյալ:	**1.65%**
Սկսած 2028 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2038 թվականի մայիսի 15-ը ներառյալ	**3.35%**

* Տոկոսները ցույց են տալիս մարման ենթակա Վարկի մայր գումարի տոկոսային մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերակցությունը կարող է այլ բան սահմանել՝ Ընդհանուր պայմանների 3.03 բաժնի (բ) կետի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բաժին I. Սահմանումներ

1. **Բազայի ճշգրտում**՝Ընկերակցության ստանդարտ բազայի ճշգրտում Վարկի արժենշման արժույթով վարկերի համար, որն ուժի մեջ է եղել Ընկերակցության գործադիր տնօրենների կողմից Վարկի հաստատման օրվա՝ Վաշինգտոնի ժամանակով 00:01-ի դրությամբ, և արտահայտվում է ամենամյա դրական կամ բացասական տոկոսային արտահայտությամբ:

2. **Անթույլատրելի ծախսեր**՝ցանկացած ծախս.

ա) պայմանագրով տրամադրվող ապրանքների կամ ծառայությունների համար, որը ֆինանսավորել է կամ համաձայնել է ֆինանսավորել, Ընկերակցությունից և Բանկից բացի, որևէ այլ ազգային կամ միջազգային ֆինանսական հաստատություն կամ գործակալություն, կամ որը Ընկերակցությունը կամ Բանկը ֆինանսավորել կամ համաձայնել է ֆինանսավորել այլ վարկի, դրամաշնորհի կամ փոխառության շրջանակում:

բ) ՄԱԿ-ի կողմից վիճակագրական փաստաթղթերում հրապարակված (սերիա M, No. 34/Rev.3 (1986) (SITC)) Առևտրի միջազգային ստանդարտ դասակարգման 3-րդ փոփոխության (SITC, Rev.3) հետևյալ խմբերում կամ ենթախմբերում կամ SITC-ի հետագա փոփոխությունների հաջորդող խմբերում կամ ենթախմբերում ներառված ապրանքների համար, ինչպես նշված է Ընկերակցության կողմից Ստացողին ուղղված ծանուցման մեջ:

Խումբ	Ենթախումբ	Նկարագրություն
112		Ալկոհոլային խմիչքներ
121		Ծխախոտ՝ չմշակված, ծխախոտի թափոններ
122		Ծխախոտ՝ մշակված (անկախ ծխախոտին փոխարինող նյութեր պարունակելու հանգամանքից)
525		Ռադիոակտիվ և

		հարակից նյութեր
667		Մարգարիտներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ մշակված կամ անմշակ վիճակում
718	718.7	Միջուկային ռեակտորներ և դրանց մասեր, վառելիքի տարրեր (քարթրիջներ)՝ չճառագայթված, միջուկային ռեակտորներ
728	728.43	Ծխախոտի մշակման սարքեր
897	897.3	Ոսկու, արծաթի կամ պլատինի խմբի մետաղյա զարդեր (բացի ձեռքի ժամացույցներից և ժամացույցի պատյաններից) և ոսկյա ու արծաթյա իրեր (այդ թվում՝ թանկարժեք քարերը)
971		Ոսկի՝ ոչ գումարային (բացառությամբ ոսկու հանքերի և խտանյութերի)

(գ) Ռազմական կամ ռազմականացված օգտագործման կամ շքեղության համար նախատեսված ապրանքների համար.

(դ) Շրջակա միջավայրի համար վնասակար ապրանքների համար, որոնց արտադրումը, օգտագործումը կամ ներմուծումն արգելված է Ստացող երկրի օրենսդրությամբ կամ Ստացողի ստորագրած միջազգային համաձայնագրերով.

(ե) ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի շրջանակում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշմամբ արգելված վճարումների համար:

(զ) Այն ամենի համար, որի առնչությամբ Ընկերակցությունը որոշում է, որ կոռուպցիա, կեղծիք պարունակող, դավադիր կամ հարկադիր

գործելակերպ է կիրառվել Ստացողի ներկայացուցիչների կամ Ֆինանսավորման միջոցները ստացող այլ անձի կողմից, որի համար Ստացողը (կամ մյուս ստացողը) ժամանակին համապատասխան այնպիսի քայլեր չի ձեռնարկել՝ այդ գործողությունների կատարման պահին դեպքում դրանց հակազդելու համար, որոնք կբավարարեին Ընկերակցությանը:

3. **Փոխառության համաձայնագիր՝** Ծրագրի գործողությունների կատարման նպատակով Ստացողի և Բանկի միջև կնքված համաձայնագիր, թվագրված սույն Համաձայնագրի ամսաթվով, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել: Փոխառության համաձայնագիրը ներառում է բոլոր հավելվածները, լրացումները և Փոխառության համաձայնագրին կցված լրացուցիչ համաձայնագրերը:

4. **Ընդհանուր պայմաններ՝** ‹‹Միջազգային զարգացման ընկերակցության վարկերի և դրամաշնորհների համար սահմանված ընդհանուր պայմաններ››, թվագրված 2010թվականի հուլիսի 31-ով, սույն հավելվածի II բաժնում ամրագրված փոփոխություններով:

5. **Ծրագիր՝** աճի խթանման և աղքատության կայուն կրճատման համար նախատեսված գործողությունների, նպատակների և քաղաքականությունների ծրագիր, որը սահմանված է կամ հիշատակված է 2013թվականի սեպտեմբերի 12-ի՝ Ստացողի կողմից Ընկերակցությանն ուղարկված գրության մեջ, որտեղ հայտարարվում է Ծրագիրն իրականացնելու Ստացողի հանձնառության մասին և Ընկերակցությունից աջակցություն է հայցվում Ծրագրի իրականացման ընթացքում օժանդակելու համար:

6. **Առհանման եզակի տրանշ՝** սույն Համաձայնագրի 1-ին Լրացման II բաժնի Բ մասում սահմանված աղյուսակում «Առհանման եզակի տրանշ» վերնագրված կատեգորիային հատկացված Վարկի գումար:

Բաժին II. Ընդհանուր պայմանների փոփոխություններ

Ընդհանուր պայմանների փոփոխությունները հետևյալն են՝

1. 2.03-րդ բաժնի ‹‹ա›› պարբերության վերջին նախադասությունը (կապված Առհանման դիմումների հետ) ամբողջությամբ հանված է:

2. 2.04-րդ (Հատկացված հաշիվներ) և 2.05-րդ (Ընդունելի ծախսեր) բաժիններն ամբողջությամբ հանվել են, իսկ II հոդվածի մնացած բաժինները համապատասխան ձևով վերահամարակալվել են:

3. ‹‹Բաժին 3.02. Սպասարկման վճար և տոկոսավճար

(ա) Սպասարկման վճար: Ստացողն Ընկերակցությանն է վճարում Վարկի առհանված մնացորդի սպասարկման վճար՝ Ֆինանսավորման համաձայնագրում նշված դրույքաչափով: Սպասարկման վճարը հաշվեգրվում է Վարկի գումարների առհանման համապատասխան օրերից և վճարվում է որպես ապառք կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր մարման օրը: Սպասարկման վճարը հաշվարկվում է 30 օրանոց տասներկու ամսից կազմված 360 օրանոց տարվա հիմքով:

(բ) Տոկոսավճար: Ստացողն Ընկերակցությանն է վճարում Վարկի առհանված մնացորդի դիմաց տոկոս՝ Ֆինանսավորման համաձայնագրում նշված դրույքաչափով: Տոկոսավճարը հաշվեգրվում է Վարկի գումարների առհանման համապատասխան օրերից և վճարվում է որպես ապառք կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր մարման օրը: Տոկոսավճարը հաշվարկվում է 30 օրանոց տասներկու ամսից կազմված 360 օրանոց տարվա հիմքով:››

4. 4.01-ին (Ծրագրի ընդհանուր իրականացում) և 4.09-րդ (Ֆինանսական կառավարում, ֆինանսական հաշվետվություններ, աուդիտ) բաժիններն ամբողջությամբ հանվել են, իսկ IV հոդվածի մնացած բաժինները համապատասխան ձևով վերահամարակալվել են:

5. 4.05-րդ բաժնի ա կետը (վերահամարակալումը կատարված է վերը նշված 3-րդ կետի համաձայն և վերաբերում է Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների օգտագործում բաժնին) ամբողջությամբ հանվել է:

6. 4.06-րդ բաժնի գ կետը (վերահամարակալումը կատարված է վերը նշված 3-րդ կետի համաձայն) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

«Բաժին 4.06. Ծրագրեր, փաստաթղթեր, գրառումներ
... գ) Ստացողը պետք է պահի Ֆինանսավորման շրջանակում կատարված ծախսերի մասին վկայող բոլոր գրառումները (պայմանագրեր, պատվերներ, հաշիվ-ապրանքագրեր, հաշիվներ, ստացականներ և այլ փաստաթղթեր)՝ Փակման ամսաթվից հետո երկու տարվա ընթացքում: Ստացողը պետք է Ընկերակցության ներկայացուցիչներին հնարավորություն տա ուսումնասիրելու այդ գրառումները:»:

7. 4.07-րդ բաժինը (վերահամարակալումը կատարված է վերը նշված 3-րդ կետի համաձայն) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

«Բաժին 4.07. Ծրագրի մոնիթորինգ և գնահատում

... գ) Ստացողը պետք է պատրաստի կամ հանձնարարի պատրաստել և Ընկերակցությանը Փակման ամսաթվից հետո ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում տրամադրի հաշվետվություն՝ Ընկերակցության կողմից խելամտորեն պահանջվող ծավալով և մանրամասնությամբ, ծրագրի իրականացման, իրավական համաձայնագրերով Ստացողի և Ընկերակցության կողմից իրենց պարտավորությունների կատարման և Ֆինանսավորման նպատակների իրականացման վերաբերյալ:»:

8. Հավելվածում սահմանված հետևյալ հասկացություններն ու սահմանումները հանվել կամ փոփոխվել են հետևյալ կերպ, և հետևյալ նոր հասկացություններն ու սահմանումներն այբբենական կարգով ավելացվել են Հավելվածում, և համապատասխան ձևով վերահամարակալվել են հասկացությունները.

ա) «Թույլատրելի ծախս» հասկացության սահմանումը փոփոխվել է հետևալ խմբագրությամբ.
Թույլատրելի ծախս՝ Ֆինանսավորման ցանկացած օգտագործում Ծրագրի գործողությունների կատարմանն օժանդակելու նպատակով՝ բացի Ֆինանսավորման համաձայնագրով բացառված ֆինանսական ծախսերից:»:

բ) «Ֆինանսական հաշվետվություններ» հասկացությունը և դրա սահմանումը, ինչպես սահմանված է Հավելվածում, ամբողջությամբ հանվել են:

գ) ‹‹Վճարման ֆինանսավորում›› եզրում կատարվել է փոփոխություն՝ կատարվել է փոփոխություն՝ ‹‹Սպասարկման վճար›› և ‹‹Պարտավճար›› բառերի միջև ավելացնելով ‹‹Տոկոսավճար›› բառը:

դ) Ավելացվել է նոր՝ ‹‹Տոկոսավճար›› եզրը՝ հետևյալ սահմանմամբ՝
Տոկոսավճար՝ 3.02(բ) բաժնի նպատակներից ելնելով Ֆինանսավորման համաձայնագրում սահմանված տոկոսավճարը

ե) ‹‹Մարման ժամկետ›› եզրում կատարվել է փոփոխություն՝ ‹‹Սպասարկման վճարներ›› և ‹‹Պարտավճարներ›› բառերի միջև ավելացնելով ‹‹Տոկոսավճարներ›› բառը:

զ) «Նախագիծ» հասկացությունը փոխարինվել է «Ծրագիր» հասկացությամբ, և դրա սահմանումը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.
‹‹Ծրագիր՝այն ծրագիրը, որը նշված է Ֆինանսավորման համաձայնագրում, և որին օժանդակելու համար տրամադրվել է Ֆինանսավորումը»:
Սույն Ընդհանուր պայմանների ողջ տեքստում «Նախագծին» արված բոլոր հղումները համարվում են հղում «Ծրագրին»:

է) ‹Սպասարկման վճար›› եզրում կատարվել է փոփոխություն՝ 3.02 բաժնին կատարվող հղումը փոխարինելով 3.02(ա) բաժնին կատարված հղումով: